Սարալանջ

Վարչական ղեկավար՝ Արամ Ղազարյան

Հեռ: 055 33 38 86

Մակերես՝ 29.8կմ²

Բնակչություն՝ 1100

Ինդեքս՝ 3021

saralanjigp@mail.ru

Սարալանջը գտնվում է Հայաստանի Շիրակի մարզում, Արթիկ համայնքի վարչական շրջան է, Արթիկից գտնվում է 5.4 կմ հեռավորության վրա դեպի արևելք, մարզկենտրոնից 25 կմ հարավ-արևելք, Արագած լեռան հյուսիս-արևմտյան ստորոտին, մայրաքաղաք Երևանից՝ 100 կիլոմետր հեռավորության վրա: ծովի մակարդակից 2010 մ բարձրության վրա: Սարալանջը հիմնադրվել է 1828–1829 թվականներին՝ Կարինից, Մուշից և Կարսից գաղթածների կողմից, որոնք ռուս-թուրքական պատերազմից հետո գաղթած հայեր էին: Մշտական բնակչության թվաքանակը 2021 թվականի դրությամբ՝ 1294: Սարալանջ է

վերանվանվել 1946 թվականի մայիսի 31-ին: Սահմանակից է Անուշավան, Գետափ, Փոքր Մանթաշ, Նահապետավան, Հառիճ համայնքներին: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների և ծխախոտի մշակությամբ: Գյուղում և շրջակայքում կան զանազան հնություններ՝ V դարի եկեղեցի (հիմնովին նորոգվել է XIX դ.), գյուղատեղի և գերեզմաններ:

Սարալանջ է վերանվանվել 1946 թվականի մայիսի 31-ին: Սահմանակից է Անուշավան, Գետափ, Փոքր Մանթաշ, Նահապետավան, Հառիճ համայնքներին: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների և ծխախոտի մշակությամբ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են պատմաճարտարապետական հնություններ հնություններ՝ V դարում կառուցված միանավ եկեղեցի, որը վերանորոգվել է19-րդ դարում և հիմնովին վերանորոգվել է 2016թվականին բարերար Սանասար Ղազարյանի կողմից, գյուղատեղի, մահարձաններ, գերեզմաններ: Սարալանջ գյուղի կլիման լեռնատունդրային է , ցրտաշունչ, 5-6 ամիս տևողությամբ ձմեռներով, ձնաբքերով, սառնամանիքներով, իսկ ամառները զով են, գերիշխում է հյուսիս –արևելյան քամիները: